

ՊԵԼՏԵԻՆ

ՊՈԷՄԱ

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ — Թարգմ. Յակ. Տէր-Գէորգեանի.

ԵՐԿՐՈՐԴ ԵՏԴ

Մագէսական մոսլ է: Մտքերը նորա,
Խառնւած են անթիւ, դժնի ցնորքներով:
Մարիան իրա ծերուկի վերայ
Նայում է քնքոյշ, պայծառ աչքերով.
Նա զրկած նորա ծնկները ամուր,
Սիրոյ խօսքեր է անվերջ շշնջում,
Սև մորածմունքներն նորանից, ի զոր,
Մարիայի սէրը չէ հեռացընում:
Խեղճ կոյսի առջ նա, անուշադիր,
Սառնասիրտ, աչքերն է խոնարհեցնում.
Եւ նորա քաղցր ջանքիմանանքին
Միայն լուռթեամբ է պարասիւսնում:
Եւ նա զարմացած ու վիրաւորւած
Ոտքի է կանգնում և ասում նորան
Հազիւ շնչելով և խիստ վշտացած.
«Լսիր ինձ, գեղման,
Քեզ համար աշխարհն Եւ յոգն մոռացման,
Միանգամ ընդ միշտ սիրեցի ես քեզ
Եւ միայն քո սիրով ապրում էի ես.

Այդ սիրոյ համար ինձ դժբախտացրի.
 Բայց այժմ ոչինչ ես չեմ արտասում.
 Յիշում ես զիշերն—երբ այն սոսկալի
 Լուսթեան միջին երգեցիր սիրել.—
 Ինչո՞ւ չես սիրում:

Մ Ա Ջ Ե Պ Ա

Ո՛չ, իմ բարեկամ, իրաւացի չես.
 Թո՛ղ անմիտ ցնորքդ. զուր կասկածներով
 Սիրտդ ես մաշում:

Ո՛չ, այդ կրքերն են, որ վրդովում են քեզ
 Եւ քո վառվառն հոգին կուրացնում.
 Հաւատ, Մարիա, իշխանութիւնից,
 Փառքից աւելի ես քեզ եմ սիրում:

Մ Ա Ր Ի Ա

Սուս է այդ, գեղման. խաբում ես դու ինձ.
 Վաղուց է՛ք, ինչ որ անբաժան էինք.
 Այժմ փախչում ես իմ գգնանքներից.
 Դու ձանձրացել ես արդէն նոցանից.
 Քո ամբողջ օրը դու անց ես կացնում
 Կամ շրջաններում մեծաւորների,
 Կամ ուրիշ տեղեր, կամ խնջոյքներում.
 Երկար գիշերով կամ մենակ ես մնում,
 Կամ եզրիտի մօտ, աղքատի հետ.
 Իսկ ինձ թշւառիս թողել ես անդէս:
 Իմ համեստ սիրոյս սառն խստութեամբ
 Պատասխանում ես.

Դու, անցեալ օրը, գիտեմ, խմել ես
 Դուլսկու կենացը. ասա, ո՞վ է դա:

Մ Ա Ջ Ե Պ Ա

Ի՞նչ նախանձում ես.
 Մի՛թէ, ես պէտք է իմ այս տարիքում

Փնտռեմ ինքնասէր մի գեղեցկուհու
 Հպարտ ողջոյնը. և մի՞թէ, աստ,
 Մռայլ ծերունիս, կ'սկսեմ ես արդ
 Հառաչել և կրել անարգ շղթաներ,
 Ինչպէս որ պարապ մի երիտասարդ,
 Եւ կեղծիքներով կանանցդ փորձել:

Մ Ա Ր Ի Ա Յ

Ո՛չ, բացաւրիւր ինձ առանց շեղւելու
 Եւ ուղիղ ու պարզ ինձ պատասխանիր:

Մ Ա Զ Է Պ Ա

Հանգստութիւնդ թանգ է ինձ համար.
 Թո՛ղ այդպէս լինի. Մարիա, լսիր.

Վաղուց մենք մի բան միմեանցս ենք դրել.
 Նա այժմ մեր մէջ պատրաստ, եռում է.
 Բարեջաջող ժամ վերայ է հասել.
 Մեծ կուի ժամը մեզնից հեռու չէ:
 Անփառք և առանց քաղցր ազատութեան
 Երկար ժամանակ խոնարհում էինք
 Գոռոզ Մոսկւայի ինքնիշխանութեան,
 Եւ Վարչաւային անձնաւոր էինք:
 Հասել է արդէն յարմար ժամանակ.
 Մեր Ուկրաինան կը լինի ազատած,
 Եւ ազատութեան արիւնոտ դրօշակ
 Ահա պարզում եմ Պեկրոսի դիմաց:
 Այժմ ամեն բան պատրաստ է արդէն.
 Ինձ հետ երկու կայսրն էլ բանակցում են.
 Եւ գուցէ, շուրով, պատերազմական
 Վէճ-ազմուկի մէջ, ես գահ բարձրանամ:
 Եւ բարեկամներ ունիմ յուսալի՝
 Նախ՝ իմ եղւիւրը, և իշխանուհի
 Դուստկայիան. ապա և՛ այն աղքատը.

Սոքա են ահա մտադրութիւնս

Ի կարար ածում:

Սոցա միջոցովն է ձեռքս անցնում

Կայսրների նամակ և հրամանները:

Ահա կարեւոր խոստովանանքը,

Որ բացի մեզնից չը գիտէ ոչ ոք:

Գճհ ես, ցնորքներից ցրւած են արդէն:

Մ Ա Ր Ի Ա

Օ', իմ սիրելիս,

Հարազատ երկրի թաղաւոր կը լինիս.

Ի՛նչ կը վայելի քո ալիքներին

Թագաւորակա՛յ թագը:

Մ Ա Ջ Է Պ Ա

Բայց լսիր.

Ողջը սորսնով դեռ չէ վերջանում:

Փոթորիկ կը լինի, ո՞վ գիտէ. սպասիր.

Դեռ գուցէ, յետոյ, ի՛նչ է ինձ սպասում:

Մ Ա Ր Ի Ա

Ես չեմ վախենում

Երբ ինձ հետ ես դու: Դու շատ զօրեղ ես:

Օ', գիտեմ, գիտեմ, զա՛հ է սպասում քեզ:

Մ Ա Ջ Է Պ Ա

Իսկ թէ կախաղան...

Մ Ա Ր Ի Ա Յ

Ուրեմն այդ դէպքում

Քեզ հետ կախաղան ես կը բարձրանամ:

Ա՛խ, ես չեմ կարող առանց քեզ ապրել.

Բայց, ո՛չ, զօրութեան նշան ես կրում:

Մ Ա Ջ Է Պ Ա

Սիրում ես դու ինձ,

Մ Ա Ր Ի Ա Յ

Եւ դեռ հարցնում ես:

Մ Ա Ջ Է Պ Ա

Ասա, քեզ համար ձրն է թանկագին—
Հայր թէ ամուսին:

Մ Ա Ր Ի Ա

Սիրելի ընկեր,
Ինչո՞ւ ես 'ի զո՞ւր այդպէս հարցնում
Դու ինձ վրդովում:
Իմ ընտանիքս մոռացութեան տալ
Ես ջանք եմ դնում:
Ես նորա համար նախադինք եղայ.
Գուցէ իմ հայրս անիծել է ինձ.
Օ՛ սոսկալի միտք... և այդ ո՞ւմ համար...

Մ Ա Ջ Է Պ Ա

Ուրեմն քեզ համար թանկ եմ քո հօրից...
Մարիամ, դու լսում ես:

Մ Ա Ր Ի Ա

Օ՛, Աստուած իմ:

Մ Ա Ջ Է Պ Ա

Դէհ, պատասխանիր...

Մ Ա Ր Ի Ա Յ

Դու ինքդ վճռիր:

Մ Ա Ջ Է Պ Ա

Լսիր, եթէ որ մեզանից մէկին
Սահմանաժամ լինէր մեռնել—դու որքին
Կը պաշտպանէիր
Եւ մեզնից որին դու կը զօհնէիր,
Դատի իրաւունքն եթէ քեզ տային:

Մ Ա Ր Ի Ա

Ա՛խ, բաւական է... սիրտս մի խառնիր.
Թո՛ղ. դո՛ւ փորձի՛չ ես...

Մ Ա Ջ Է Պ Ա

Ո՛չ պարասխանիր...

Մ Ա Ր Ի Ա

Դու գունատւած ես. խօսքերդ խիստ են.

Օ՛, մի՛ բարկանար.

Ամե՛ն, ամե՛ն բան, ես մի՛շտ պարաստ եմ

Զոհել քեզ համար:

Բայց այդ խօսքերը ինձ սրտողում են.

Օ՛, բաւական է...

Մ Ա Ջ Է Պ Ա

Մարիա, յիշիր

Այ՛ն ինչ որ դու ինձ այժմ ասացիր:

Խաղաղ է զիշերն Ուկրա՛յնայի,
Երկինքը պայծառ. ասողերը շողում:
Օղը, յագեցած իւր անոյշ քլնի
Հեշտարար նիրհով, սթափել է ուղում.
Սոսի տերեւներ փայլուն, արծաթեայ,
Լճու զողգողում են բարակ զեփուռից.
Լուսինը Սպիտակ-եկեղեցու վրայ
Հանդարտ փայլում է երկնակամարից,
Եւ գետմանների շքեղ այգիներն,
Եւ հին ամրոցն է պարզ լուսաւորում:
Շուրջը սքանչելի հանգիստ է փրկել...
Բայց ամրոցի մէջ շշուկ է լսւում.
Աշտարակներից մէկում շղթայւած,
Սրտամաշ խորին մտածմունքներում,
Պարուհանի մօտ Կաջուբէյն նստած՝
Մռայլ հայեացքով երկինք է նայում:

Վաղ առաւօրեան

ժամն է գլխաւորման.

Բայց նա այդ պատժից երկիւղ չէ կրում:
 Եւ ինչ է մահը—նինջն է ցանկալի.
 Զառամեալ կեանքը նա չէ ամիստում
 Պարտապառ է պարկեւ արնոյ պաղաղում:
 Նիրհը յաղթում է: Բայց, արդար Ասպած,
 Լուռ, ոճրագործի ոտքի տակ ընկնել,
 Ինչպէս մի անշունչ, անբան արարած,
 Հէնց թաղաւորից թշնամուն յանձնել՝
 Անանարկելու աշխարհի զիմաց:
 Կեանքից և պարտից զրկել, և ապա
 Բարեկամներին կախաղան տանել,
 Եւ այնուհետեւ գերեզմանի վրայ
 Նոցա դառնագին անէծքը լսել...
 Անմեղ թեքելիս տապարի տակին
 Տեսնել թշնամու ուրախ հայեացքը...
 Եւ չը կրակած վրէժը ոչ ոքին՝
 Ընկնել սոսկալի մահուան գիրկը:

Եւ մտարեբեց նա իւր Պալտաւան,
 Հարազատների, բարեկամների

Մտերիմ շրջան.

Փառք, հարստութիւն անցած օրերի
 Եւ անոյշ երգեր սիրելի աղջկան.
 Յիշեց հին տունը, ուր ինքն էր ծնւել,
 Հանգիստ քուն եղել.

Որտեղ նա կրել էր աշխատանք երկար,
 Եւ ինչով կեանքում զւարճացել էր.

Եւ ինչո՞ւ համար...

Բայց ահա յանկարծ ժանգոյ կողպէքում
 Բանալին հնչեց. նա սթափեց իսկոյն.
 Եւ մորածում է թշուառն ու ասում.
 Ահա նա. ահա իմ արնոյ ուղին

Առաջնորդողը—խաչի նշանով
 Իմաստուն բժիշկ հոգևոր վշպին,
 Մեղքերին հօր թողութիւն տուող,
 Մեզ համար խաչած Քրիստոսի ծառան,
 Արը նորա սուրբ արիւնն ու մարմին
 Բերել է ինձ մօտ. ես կ'ամրապնդեմ
 Վարան, համարձակ կը զիմեմ մահւան
 Եւ կը հաղորդեմ անվաստնան կեանքին:

Եւ խեղճ Կաջուբէյն տխուր, սրտաբեկ,
 Պատրաստ է բանալ իւր սրտի վշտեր
 Ամենակարող անմահի առաջ,
 Եւ իւր աղերսը նորան առաքել:
 Բայց աւանդ, ոչ թէ սուրբ միայնակեաց
 Այլ ուրիշ հիւր է առաջին տեսնում.
 Դաժան Օրլին է կանգնած իւր զիմաց
 Եւ չարքաշ ծերը զգւանքով լցւած՝
 Նորան դառնօգին հարցմունք է ուղղում.
 «Ինչո՞ւ ես եկել, զ' մարդ քարասիրտ,
 Ինչո՞ւ է խռովում վերջին հանգիստս
 Անդու՞թ Մաղէպան:

Օ Ր Լ Ի Կ

Հարցապնդումը դեռ չէ վերջացել.
 Դէ՛հ, պատասխանիր:

Կ Ա Չ Ո Ւ Բ Է Յ

Ես իմ պատասխանն
 Տըւել եմ արդէն. թող ինձ. հեռացիր:

Օ Ր Լ Ի Կ

Ղարձեալ մի խօսք է պահանջում քեզնից
 Մեր պան զեպմանը:

Կ Ա Ձ Ո Ի Բ Է Յ

Վաղուց ինձանից
 Խոստովանանքս լսել էք արդէն...
 Իմ ցուցմունքներս բոլորը կեղծ են,
 ես նենգամբիր եմ, դարան եմ լարում,
 Գերմանն արդար է... էլ ի՞նչ էք ուզում:

Օ Ր Լ Ի Կ

Յայտնի է մեզ, որ դու հարուստ ես շատ.
 Յայտնի է նաև, որ Դիկանկայում 20)
 Շատ զանձեր ունիս պահած հողապատ.
 Դու պէտք է մեռնիս. և ըստ օրէնքի
 Ողջ ունեցածդ զօրքի զանձարանն
 Պէտք է ժառանգի:
 Բո վերջին պարտքդ յիշեցնում եմ քեզ,
 Ասա, զանձերդ որտեղ ես պահել...

Կ Ա Ձ Ո Ի Բ Է Յ

Այո՛, չէք սխալւել. ինձ այս աշխարհում
 երեք զանձ միայն խնդում էր բերում.
 Առաջին զանձը—դա իմ պարիւնն էր.
 Այդ զանձը ինձնից խլեցին տանջանքներ.
 Իմ երկրորդ զանձը անդառնալի էր—
 եւ դա պարիւնն էր իմ սիրած զօրքի.
 ես օր ու զիշեր դողում էի վրան—
 Այդ էլ գողացաւ ինձնից Մաղէպան:
 Բայց պահպանել եմ իմ վերջին զանձը—
 Իմ երրորդ զանձը— վրէժը սրբազան,
 Տիրոջ յանձնելու պարտատրում եմ այն:

Օ Ր Լ Ի Կ

Օերո՛ւկ, Թող ունայն ցնորքներդ բոլոր.
 Դու մի մոռանալ, որ աշխարհն այսօր
 Թողնում ես ընդ միշտ. մտածիր միայն.

Հանաքի ժամ է՛. Կուր շուր պարասխան
Եթէ չես ուզում վերստին տանջել.
Ո՞րտեղ ես ծածկել:

Կ Ա Չ Ո Ւ Բ Է Յ

Զազրելի սրբուկ...
Ե՞րբ կը վերջացնես հարցմունքդ անհեթեթ.
Համբերիր, թող դեռ գլուխս վայր դնեմ՝
Դեռ և Մազեպան գնացէք այնուհետ,
Եւ իմ գանձերս միտեղ հաշւեցէք
Եւ ձեր արիւնս ու պիղծ մարմնով
Ներքնայարկերս ողջ աւերեցէք.
Կրակ տէք տներ, քանդեցէք այգիք,
Ապա դուք դուարս ուղեկից տարէք.
Նա ձեզ ամեն բան կը տեղեկացնի,
Գանձերիս տեղը ցոյց կը տայ նոյնպէս.
Միայն վերջին րոպէս ինձ հանգիստ թողէք,
Տիրոջ անունով աղաչում եմ քեզ:

Օ Ր Լ Ի Կ

Ո՞րտեղ ես ծածկել փողերդ, ցոյց տուր.
Ձեռ ուզում. փողերդ իրտեղ են. յայտնիք,
Մտածի՛ր ծերուկ. մի ծածկի՛լ ի զուր,
Թէ ոչ—վար կը լինի դորա հետեանք.
Լռում ես... ուրեմն... էյ, դահիճ... ²¹⁾ տանջանք...

Դահիճը մտաւ... Օ՛ տանջի գիշեր...
Բայց հէր էր արդեօք գետմանը փախել...
Օձային խղճի սուր խաչթոցներից
Այն չարագործը իրտեղ էր թաղնւել...
Այն ննջարանում, ուր կոյսն է նիւհած
Երջանիկ, դեռ ևս ողջին անծանօթ,
Ահեղ մութերով հոգին պաշարւած՝
Էւր ջահիլ սանի պերճ անկողնի մօտ

Նստած է մռայլ, գլուխը խոնարհած:
 «Կը մեռնի շուտով անմիտ Կաշուբէն».
 Անկարելի է ազատել արդէն:
 Քանի մօտ լինի իւր նստատեղը՝
 Նա պէտք է այնքան համարձակ գործի.
 Եւ նորա առաջ թշնամանքը
 Այնքան աւելի պէտք է խոնարհել:
 Փրկութիւն չը կայ,
 Մարտիչն ու ընկերն անշուշտ կը մեռնին:
 Բայց աչք ածելով նորա անկողնին՝
 Մտածեց... «Ս», ինչ պէտք է անի նա
 Երբ օրհասական խօսքը իմանայ.
 Նա հանգիստ է դեռ.
 Բայց այս գաղտնիքը անկարելի է
 Երկար պահպանել:
 Տապարի ձայնը վաղ առաւօտեան
 Կը թնդացընէ ողջ Ուկրայինան,
 Աշխարհ կը խօսի նորա չորս կողմը:
 Ախ, տեսնում եմ ես. նա, որին կեանքում
 Վրդովմունքներ է միայն վիճակւած,
 Զը պէտք է իւր մօտ կանչէ ամուսնուն,
 Մենակ պէտք է գնաց մրրկի դիմաց:
 Չես կարող լծել դու մի սայլի հատ
 Մի սէգ ձիու հետ քնքոյշ այծեամբին.
 Աչքաթող արի այս անգգուշաբար,
 Եւ վճարում եմ արդ սխալիս համար:
 Ամեն, ամեն բան — ինչ որ անգին է,
 Ինչով կեանքը մեզ գրաւում է, թովում,
 Խեղճը պարգևեց ինձ, մռայլ ծերիս.
 Բայց ինչ հարւած եմ ես նորան ուղղում:
 Եւ նայում է նա.
 Ո՛հ, ինչպէս քաղցր է ջահելը հանգչում
 Խաղաղ մահճի վրայ,
 Ի՛նչպէս անխափան

Եւ քնքշութեամբ քունը փայփայում,
 Գդւում է նորան.
 Կարմիր շրթունքներն ահա բացեցին,
 Եւ ջահիլ կուրծքը շնչում է անխռով.
 Իսկ վաղը... Վաղը... ցնցւելով ուժգին,
 Մազեպան նրանից արագ շուռ եկաւ,
 Վեր կացաւ տեղից և լուռ քայլերով
 Իւր առանձնացած պարտէզը իջաւ:
 Խաղաղ է գիշերն Ուկրայինացի:
 Երկինքը պայծառ. աստղերը շողում:
 Օդը յագեցած իւր անոյշ քընի
 Հեշտարար նիրհով, սթափել չէ ուզում.
 Եւ սոսիների արծաթ-տիւրեւներն
 Մեղմիկ շարժում է գիշերւոյ քամին.
 Բայց օրարոյի և մնայլ ցնորքներ
 Ողջ պաշարել են գեղմանի հոգին:
 Եւ դադարաւորող աչքերի նման
 Գիշերւոյ անթիւ փայլուն աստղերը
 Ծաղրական տեսքով նայում են նորան:
 Անձուկ կարգերով շարած սոսիներ
 Տարուբերելով վեհ կապարները
 Լուռ շշնջում են իբր դադաւորներ:

Յանկարծ մի թոյլ ճիւղ... Անորոշ հառաչ
 Ամրոցից կարծես հասաւ ականջին.
 Այդ մի երանգ էր արդեօք խօսական
 Գաղանի օռնոց, թէ՛ վայուն բուռ.
 Տանջանքի՞ հառաչ, թէ՛ մի ուրիշ ձայն. —
 Բայց իւր վրդովմունքն անվախ ծերունին
 Չը կարաց ծածկել. և այն թոյլ ձայնին
 Նա մի այլ ձայնով տուեց պարասխան.
 Ա՛յն ձայնով, որով սագմական դաշտեր
 Կադաղի խինդով նա խլացնում էր.
 Երբ Չաբէլայի և Գամալէի,

Եւ նորա... և այս Կաչուբէյի հետ,
Կուէի վառ կրակով ուրախ թռչում էր:

Վառ արշալոյսի վարդագոյն շողերն
Անամպ երկինքը սփռում է պայծառ,
Փայլում են ձորեր, արա ու բլուրներ,
Գետի ալիքներն, նաև մութ անտառ.
Վաղորդեան աշխոյժ աղմուկը լսեց,
Եւ ապա մարդը իւր քնից զարթեց:

Դեռ ևս քաղցր նիրհում է Մարիան
Եւ թռում է նրան իւր քնի միջին,
Որ մէկը հանդարտ դուռը բաց արաւ
Եւ լուռ մօտեցաւ նորա անկողնին.
Նա զարթեց. սակայն նորա ժպտալից
Կէմքը մթազնեց պայծառ շողերից.
Մարիան ձեռքը մեկնում է նորան
Եւ թովի: Ժպտով քաղցր շնչում.
«Մազէպա, դո՛ւ ես... Բայց մի ուրիշ ձայն
Պարասխան տըւեց. և նա սարսուաց.
Նայեց, օ. Ասուած, և ի՛նչ է տեսնում.
Առաջին դունաւոր իւր մայրն է կանգնած:

Մ Ա Յ Ր Ը

Լռի՛ր, օ լռի՛ր... մի կործանիր մեզ.
Գիշերով գաղտնի զգո՛յշ ամրոց մտայ
Եւ արթառազին աղաչում եմ քեզ.
Այսօր են պարտում. և դո՛ւ կ'ազդես միայն
Քարացած անգութ սրտերի վերայ.
Փրկիր քո հօրը:

ԴՈՒՍՏՐԸ (սարսափած)

Ի՛նչ պատիժ, ի՛նչ հայր...

Մ Ա Յ Ր Ը

Միթէ մինչև այժմ դու այդ չըզիրես.
 Անպարտում չես, այլ պալատումն ես.
 Պէտք է իմանաս թէ ինչպէս հօր,
 Ինչպէս անդ է գերմանի ոյժը.
 Ինչպէս լսում է նորան թագաւորը,
 Եւ պարտում են թշնամիները:
 Բայց նորա համար, պեսնում եմ, ինչպէս
 Քո ընդանիքից դու հրաժարում ես:
 Երբ հայրդ զժնդակ մահւան է մայրեալ,
 Եւ երբ պարտաւոր կացինն է փախում,
 Քեզ այստեղ անհոգ պեսնում եմ քնած:
 Տեսնում եմ արդէն մենք իրար համար
 Դարձել ենք օտար:
 Ուշքի եկ աղջիկս, Մարիա, վաղիր,
 Դրկիր, փաթաթւիր նորա ոտքերին,
 Փրկիր քո հօրը. մեր հրեշտակն եղիր.
 Դու կը կաշկանդես շարագործներին
 Եւ սուր պապարը կը հեռացընես:
 Հասիր, պահանջիր, նա չի մերժի քեզ.
 Դու նորա համար

Ծնող, Ասուած, պարիւ, ողջը մոռացար:

Դ Ո Ւ Ս Տ Ր Ը

Այս ինչ եմ լսում.
 Մազէպան, իմ հայր, պարիժ... և այստեղ
 Աղերսանքներով մայրս, ամրոցում...
 Ո՛չ, կամ ցնորեւ եմ, կամ թէ զառանցում:

Մ Ա Յ Ր Ը

Ո՛չ, ո՛չ. Տէր ընդ քեզ

Սրանք ցնորքներ չեն և ոչ տեսիլներ.
 Միթէ մինչև այժմ դու դեռ չըզիրես,

Որ դառնացած քո թշուա հայրը
 Զը կարաց փանել իւր սիրած զսրեր
 Անպարուծ թիւնը:

Որ յագուրդ փալու իւր արդար վրէժին
 Թագաւորի մօտ մարնեց գերմանին:

Արիւնշաղախ, անգուծ փանջանքներն
 Խոտորվանել սորիպեցին նորան
 Զար զրպարփանքներ, նենգ նպատակներ:
 Որ ինչպէս մի զոհ տոսկ ճշմարտութեան
 Յանձնւած է նա իւր անգուծ թշնամուն:

Մի թէ չը գիտես որ զօրքի առաջ
 Պէտք է հէնց աչսօր գլխարեն նորան,
 Եթէ չը փրկի Բարձրեալ Տիրոջ աջ:
 Որ նա դեռ այժմ շղթակիր նստած
 Այստեղ բանտումն է:

Դ Ո Ւ Ս Տ Ր Ը

Ասուած իմ, Ասուած:

Այսօր... խեղճ իմ հայր...

Եւ կոյսը ինչպէս

Սառած մի դիակ ընկաւ մահճի վրան:

Բազմաթիւ ամբօխ: Պսոզում են ներեր,
 Թմբուկներ զարկում. սերդիւկներ ²²⁾ թռչում
 Ուղիղ կարգերով շարւում են գնդեր,
 Պռնում է ամբօխ. սրտերը դողում:
 Եւ ամբողջ ուղին մարդկանցով լցւած,
 Շրջում է օձի ագիի նման.
 Իսկ դաշտի մէջտեղ պարժարանն է դրած
 Եւ ագահ դահիճը նորա վերան
 Զբօսնում է ուրախ և դահին սպասում:
 Եւ մերթ էլ նա իւր սպիտակ ձեռքերով
 Ծանր փապարն է առնում խաղացնում:
 Մերթ հանաք անում խուռն ամբօխի հետ:

Եւ ահեղ գոչման փոխել էր անհետ
 Կանանց ձիւ, ծիծաղ, հաչոցանք, շշխնու-
 Յանկարծ մի սուր ձիւ լսեց, և յետոյ
 Ամեն ինչ լսեց, միայն ձիւ գոփիւն
 Ահեղ լռութեան մէջ լսելի էր:
 Այնորեղ դերմանը մեծաւ որներով,
 Քաջ սերդիւկներով շրջապատուած.
 Լուռ սլանում էր մի սևուկ հեծած:
 Միւս կողմ՝ Կիւսի լացն ճանապարհով
 Մի սալ էր գալիս. բոլորը շփոթուած
 Իրանց հաչեացքներն աչն կողմ դարձրին.
 Սալի վրայ—երկնի, երկրի հետ հաշուած,
 Եւ ամբաստնուած հօգը հաւարով
 Անխօս նստած էր անմեղ Կաշուբէյն:
 Նորա հետ Իսկրան խաղաղ, անվրդով,
 Ինչպէս որ դառն՝ հնազանդ վիճակին:
 Սալը կանգ առաւ: Եւ ամեն կողմից
 Ողջը բարձրաձայն ինդրել սկսեցին.
 Միւսեց, բարձրացաւ խունկը բուռվարից.
 Լուռ աղօթում են մարդիկ երկնքին:
 Իսկ թշուառները, ՚ի տեղ թշնամու,
 Ի զուր զոհում են...

Ահա եկան նրանք... ահա բարձրացան...
 Խաչակիքելով պառկեց Կաշուբէյն.
 Լռել են մարդիկ սև մահաւան նման.
 Կացինը շողաց և գլուխը թռաւ.
 Եւ ամբողջ դաշտը խոր հառաչ քաշեց.
 Նորանից յետոյ երկրորդը ընկաւ,
 Եւ կանաչ խորը արիւնով ներկեց:
 Չարսիրտ դահիճը սրտով խնդալով
 Գլուխները բռնեց մազից և, ուժգին
 Իւր զօրեղ ձեռքը առաջ ձգելով,
 Երկուսն էլ ցնցեց ամբոխի գլխին:

Կատարեց պապիժն: Ամբոխը կրկին
 Տուէն է յետ դաւնում, անհող ցրւում է,
 Եւ իւր մշտական հոգսերի մասին
 Սրդէն իրար մէջ վիճաբանում է:
 Ամացանում է ողջ դաշտը կամաց.
 Միայն խաչարդէտ ուղիի միջով
 Անժամ երկու կին յոգնած, թողութեւ,
 Անցան վազեցին վախով լի դէմքով.
 Պատժի փեղն էին շտապում կարծես,
 «Ճար ուշ է արդէն», մէկը նրանց ասաց
 Եւ դէպի դաշտը մարնացոյց արաւ.
 Այնտեղ պատժարանն խորպակում էին.
 Աղօթք էր կարդում քահանան խաղաղ,
 Եւ կազակները բարձրացնում էին
 Սալակի վերայ մի կաղնէ դադաղ:

Միայն Մազէպան զօրքի առաջով
 Դաժան հեռացաւ գլխաման փեղից.
 Բաց նորա սիրտը աչրւում, տանջւում էր
 Մի սարսափելի ամայութիւնից:
 Ոչինչ չէր խօսում նա ճանապարհին.
 Ողջ փրփուր կտրած սլանում էր ձին.
 Ո՛չ ոք մօտենալ չէր վտահանում:
 Ո՞ւր է Մարիան, հարցնում է գեպմանն
 Երբ տուն է հասնում:

Սրանում է երկչոր, համր պտտասլան
 Ակամաց վախից ապշած, վրդովւած,
 Դիմում է անխօս նորա ննջարանն.

Այնտեղ մարդ չը կայ.

Ապա իջնում է աչքին և յուզւած՝

Շրջում է թափառ:

Բաց ո՛չ լայն լճի խաղաղ ափերին
 Ո՛չ թփերի մէջ, ո՛չ ծառերի տակ

Չէ մնացել մի հեղք. այգին էլ դադարկէ
 Գնացել է անդարձ... Կանչում է շուրով
 Իւր ծառաներին,
 Քաջ սերզիւկներին.
 Նրանք մօտ են վազում. նոցա նժոյգներ
 Խրոխտ խրխնջում են.
 Հեղապնդելու լաւեցան կանչեր.
 Հեծնում են հապճէպ և ջահիլները
 Կայծ ու հուր դարձած անհեղափոխում են:
 Անցնում են, գընում րոպէներ անգին,
 Բայց դեռ Մարիան չէ վերադարձել.
 Ոչ ոք չը գիտէր, յայտնի չէր մէկին,
 Թէ ի՞նչպէս, և կամ ինչո՞ւ էր փախել:
 Մազէպան անխօս կրծում էր իրան:
 Լուռ դողում էին ողջ սպասաւորներ:
 Գեղմանը միտաւ նորա ննջարան,
 Սոսկալի թոյնը սրբում եռում էր,
 Եւ փակեց աջնաբեղ:
 Գիշերւայ մթնում նորա մահճի մօտ,
 Կորիզուի նստած, չէր փակում աչքեր
 Տանջւում էր անհղ:
 Գիշերը անցաւ, բացեց առաւօտ,
 Ուղարկած ծառայք մէկ-մէկ յետ եկան.
 Նոցա նժոյգներ շնչասպառ եղած,
 Սանձ, պայտ, թամբակալ ողջը տրիւնոյ,
 Զարդած, արքրած, փրփուրով պատած:
 Բայց և ոչ մէկը չը կարողացաւ
 Պեղճ կոյսի մասին տալ տեղեկութիւն.
 Նորա գոյութեան հետքերը կորան
 Որպէս բառերի լոկ դադարկ հնչիւն:

Պուշկինի արած նկատողութիւնների շարունակութիւնը
«Պաշտաւա» պոէմայի մասին

20. Կաշուբէլի գիւղը:

21. Կաշուբէլն արդէն դատապարտւած էր մահաւոյ, որ գետմանի զօրքում ենթարկւած էր տանջանքների: Խեղճի տւած պատասխաններից երևում է, որ նորան հարց ու փորձ էին անում իւր պահած գանձերի համար:

22. Գետմանի սեփական ծախքով ապրող զօրքը: